

քանդակ կը յօրինէ երկինքը իւր կարմորակ
մկունքով: Խոռովայոյզ և առօգին օրտան այս
փոթորիկն մէջ, թուի թէ խաչերն կ'երերան
և պատժաւորք կը գահալիժին. և ի լրումն
կսկծագին յուզման և մեծատեսիլ խոռովա-
թեան, կը տեսնուին անոր խորերը, լուսա-
ւոր ծուխի մը ներքեւ, կոյտ մը կանգնած
մարմիններ՝ որք յարութիւն կ'առնուն: Եւ
ճրմոց բովանդակ բարձրութիւնն ծածկուած
է այս տեսակ նկարներով՝ որք մի և նոյն
արուեստի գործեր են: Քրիստոս երկինք
կ'ելնէ, և նորա շուրջն մեծամեծ մերկ հրեշ-

աակներն միջոցի մէջ՝ աւժով իրենց փողերը
կը հնչեցնեն: Գալարուած փողերիկ հրեշտակ-
ներու խուռն բազմութիւն մը վեր կը վերցնեն
զսուրք կոյսն, մինչդեռ նորա ներքեւ առաւ
քեալը կ'աղաղակեն և գետին կ'ընկնին:
Ամեն կողմերէն, ամեն նկարներու մէջ լոյսն
կը թրթռայ. չկայ օդային հիւլէ մը որ չեւ-
րերայ, և կեանքն այնպէս առաքօրէն կը
գեղո՛ւ՝ որ դուքս կ'ելնէ և կը մխտայ քաղ-
րերէն, ծառերէն, երկիրներէն, ամպերէն,
ամեն զոյնէ և ամեն ձեւէ անշուշտ բնութեան
ընդհանուր յազմանէն:

Շարայարելի

ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ

ԳԱՏԾԱԿԱՆ ՎԷՊ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ Ա Ռ Ա Զ Ի Ն Դ Ա Ր Ո Ի

(Յու յ'էջ 25)

ԳԼՈՒԻ Ժ

Ս, Ց Ո Վ Է Ա Ն Է Ս Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի 2

ՍԵՐՍՈՍ արագաբալ կը յառաջէր. կը
փափաքէր տեսնել զՓլորոնիս, և հա-
մոզել որ իւր ամառանոցը գայ, որ նազովորեցող
դէմ ելած հալածանքներէն պիտի ազատ
մնար. և իւր խորհրդոց շփոթութեան մէջ
չէր մտածեր՝ որ եթէ օրիորդն հաւանէր
իրեն հետեւելու, իւր Աստուծոյն անհաւա-
տարիմ պիտի ըլլար, և հետեւաբար այլ եւս
ինք զինքը ծածկելու հարկ պիտի ըլլար:

Շուտով հասաւ գաւիթն բոլորովին ամայի
էր, և առնն անբնակ կը թուէր: Հոն մա-
րաթ ժամանակ մտած և զոց պատգաբակով
զուրս ելած ըլլալուն համար տան ներքինը
չճանչնալով, սրահին մէջ կեցաւ. վասն զի չէր
գիտեր՝ թէ մը փոքն գիտէր. Նոյն պահուն կի-

տարաց դուռ մը տեսաւ, մտածեալ, հրեց և
հնութենէ սեւացած պատերով սենեկի մը մէջ
մտաւ. թուից լանցաւ արիշ աւելի փողերիկ
սենեակ մը. և զգացած յուզմունքէն այլապ-
րած՝ անոր սեմոց վրայ կեցաւ, փլորոնիս ան-
կիւն մը նստած: Անխելաւոր զգեստ հիւ-
սելաւ համար բուրդ կը մտնէր:

Տասն և հինգ օրերէ ի վեր մահկամաց
քրիստոնէին գէմն շատ այլափոխուեր էր-
պսմ աւելի զաւկանաց և նիւար կը թուէր,
և սիրութիւն մի իւր քաղցր պտարթու-
թիւնը ծածկած էր: Նա չզգաց երիտասարդ
դին գալը. և աչքը գործիարար իլին վրայ
ուղղած, մեղմանայն կ'աղօթէր:

Սերաստա անշարժ կեցած՝ մինչև անգամ չէր

Այս խօսքին վրայ պատրիկը խորին զգացում մ'ունենցաւ։ Այժմ՝ երբ հրեշտակ մի իւր հետ կը խօսէր, կուտանոցին մէջ լսած խորհրդաւոր խօսքերը դարձեալ յիշեց. սակայն անոնցմէ զգացած յուզմունքը սահմանաւերելի ըստ։

— Աղօթէ՛ ինձ համար եթէ կ'ուզես. բայց քեզ նուիրած ապաստանարանս ընդունէ։

Սեքստոսի խօսակցութիւնն ընդհատեցաւ։ Անիկետոսի անզգալապէս վրայ հասնելովն, որ լրջապէ՛մ կանգնած էր դրան սեմին վրայ։ Սեքստոս գունատեցաւ, և կը զող-զողար՝ ինչպէս յանցաւոր մը դատաւորին առջև։ Քրիստոնեայ քահանայն յամրաքայլ իրեն մօտեցաւ և կշտամբիչ ձայնով ըստ։

— Ահա՛ չարերու երախտագիտութիւնն. դու զժողովութիւն և արտօնեք կը ցանես այն հիւրասէր տան մէջ, որ զքեզ ընդունելու համար բացուած է։ Սակայն սա իմ յանցանքն է. պէտք չէր թողուլ բազէին որ աղանոյ կեռին մօտենար։

— Ես իւր լաւութեան համար կ'ուզէի հեռացնել զինքն այս տունէն, յորում քու անմիտ անձնասիրութիւնդ զնա մահու կ'ենթարկէ, ըստ։ Սեքստոս՝ իւր այլայլութենէն սթափելով։

— Դո՛ւ և մի՛ երկար խօսիր, ո՛վ պատրիկ, որովհետեւ քու գիտաւորութիւնդ այդ չէր. ես զքեզ կը ճաննամ, և դու չես կարող իմ այս սպիտակ ալիքը խաբել... Բայց զիտցիր, որ միայն մեղայ նշաւակութենէն կարելի է վախիլ. պէտք չէ վախել մահուանէ, երբ կը հասնի արդարոյն վրայ՝ որ իւր կեանքն անցուցած է ըստ աստուածային օրինաց։ Եթէ կ'ուզես, այս օրիորդին գաւանած կրօնքն յայտնէ, և երկնից ուները իրեն առջև բացած կ'ըլլաս։ Մի՛ մոլորեցըններ անոր սիրտը. դու չես զիտեր թէ ինչ ահաւոր պատասխան պիտի տայ Ամենակալին այն անձն՝ որ անմեղութիւնը կը խանգարէ և առաքինութիւնը կը զայլակցեցնէ։ Իմ խօսքերս անմիտ կը թուին և զքեզ կը ծիծաղեցնեն. ես չեմ զարմանար, որովհետեւ անոնք միայն քեզի նման ապականեալ անձանց այդպէս պիտի թուին։

— Սեքստոս չի գիտեր, թէ մարտիրոսութիւնն ինձ համար բարիք մ'է, և անոր համար կ'ուզէր զիս տանիլ, ըստ Փլուրոնիա՝ պատրիկն վրայ կարեկցելով։

— Զպաշտօնիդ այնպիսի ցաւակցութենէ մը, որ առանց քու գիտնալու՝ կրնայ զքեզ կորսնցնել։

Յետոյ Անիկետոս Սեքստոսի դառնալով՝ աւելցուց։

— Գնա՛, և այլ ևս այս տան սեմը մի՛ կոխեր. եթէ չես զոյար և յրէժնայրութիւն կ'ուզես, մատնէ՛ զիս. ես քրիստոնեայ եմ։

Եթէ սպիտակ ալիքը չի յարդէի, ես զքեզ կը ջախջախէի, ո՛վ ծերունի, աղաղակեց Սեքստոս ծայրաքայն բարկութեամբ։ Ահա կը հեռանամ, բայց կամացդ հակառակ պիտի ազատեմ՝ զՓլուրոնիա քու բռնութենէն. կը տեսնուի՞նք։

— Գրուած է, մրմնեց Անիկետոս՝ մինչդեռ Սեքստոս կը հեռանար, թէ « Տեսայ ամէ պարիշտն, Լիբանանու մայրերէն աւելի բարձրացած, այն տեղէն անցայ և այլ ևս չի կար. փնտոցի, բայց այլ ևս հետքը չէր մնացած »։

Փլուրոնիա ծնրապիր և ձեռները իրաքու միացուցած, հեծե՛ծանօք աղաղակեց.

— Օրհնեալ և զօրաբանեալ եղի՛ր, Աստուած իմ, և զթա՛մ մեր վրայ։

Սեքստոս կատաղութենէն աստ անդ թափառելով, քրիստոնեայ քահանայն կ'անիծէր և հազար ու մէկ անզգամ խորհուրդներ կը մտածէր։ Երբեմն կ'ուզէր գիշեր ժամանակ իւր բարեկամներով Անիկետոսի խեղճուկ բնակարանին վրայ յարձակիլ. երբեմն այլ այս խորհուրդը կը մերժէր՝ աւելի վայրենիներ 'ի գործ զնելու համար։ Այսպէս իւր բարի զգացմանց և տպականեալ կրթութեան փոփոխակի ազդեցութեան տակ տուն վերադարձաւ։ Այն ժամանակի մեծամեծաց առած կրթութիւնն անձնասիրութեան, ցոփութեան և մեղկութեան խառնուրդ մ'էր, որ քիչ ժամանակէն ստորին աստիճանի անձանց ալ հաղորդուեցաւ, և որոյ հետեանքն՝ եղաւ այս մեծ ժողովրդեան վաղահաս անկումն։ Վայն զի մարդկան և ազգաց կենաց մէջ ապականեալ բարքերն կը սկարացնեն, կ'ամրանացը-

հեն և կը նուստացնեն անձինքը և ժողովուրդները :

Սեբաստոս ամարանոցին ճեմելեաց մէջ քայլելով՝ իւր մտածմանց մէջ ընկղմած էր. ի վերջոյ՝ շատ մտածելէն և սակաւ վճռելէն յոգնած, ուզեց իրեն սիրելի հանդիմանորով պուարճանալ. ուստի հրամայեց որ իւր կողքը լծեն :

Ինքն անձամբ կը վտեր իւր աշխոյժ ձիւրը, և նաւթիցի գերին իւր ոսից մօտ նստած էր. քանի մը վայրկեանէն Սարինոսի պատեղիններէն հեռանալով, Լատինեան ճամբով ուղեորեցաւ դէպ ի իւր Լուկիոս Կուինտիլիոս բարեկամին հոյակապ ամարանոցն. այս անձինս օտարութիւնն էր Հռոմայ աւանդէն աւելի անառակ պատրիկները իւր մօտ ընդունել : Սեբաստոս կը կարծէր թէ կառաց շառափունէն պիտի սթափի. սակայն փորձանքի կերպարանքն անզազար իրեն կը հետեւէր, և կը համարէր թէ միշտ կը լսէր նորա ձայնը՝ որ քաղցրութեամբ ուրիշ լեզու մը կը սովորեցնէր. լեզու մը, որ լի էր հաւատովք և առաքինութեամբ, որ իբր առանց իւր ուզելուն՝ չարութեան դէմ զարշնդը կ'ազդէր իրեն :

Կայծակի արագութեամբ սրանալով, իսկոյն հասաւ այն տեղը յորում Լատինեան ճանապարհն կ'երկնդի՝ Կապենեանը ձեռացրնելու համար. եւ ուշադրութիւն չէր ընե՜ր թէ ուղւոյն մէջ ասկական մարդ մը կայ : Մնշուշտ նա գետին կը տապալէր՝ եթէ ձիոց սանձն վաճառեան ուժով մը չի բռնէր : Սեբաստոս այլ տեսած և սանձերը քաշած էր. սակայն իւր պատրկական հոյարտութիւնն զինքը զրոյց պատժել այն յանդուգն ռամիկը՝ որ համարձակեցաւ դպչել իւր ձիոց, իսկոյն գաւազանը վերոց որ զարնէ. սակայն միւսն աննման զիրարթեքութեամբ մի հարուածէն խոյս տուաւ, եւ արհամարհանօք Սեբաստոսի նայելով,

— Ահա՛ պատրիկներուն երախտապիտուութիւնն, ըսաւ բարձրաձայն. ձեռքը ժողովուրդն՝ երբ նա չուզեր ջախջախել : Միով բանի՛ ես քեզմէ իբր փոխաբէ՛ն՝ արդէն իսկ իսաւազանի հարուածոյ մը կը սպասէի :

Սոյս խօսքերը Սեբաստոսի ուշադրութիւնը

գրաւեցին : Մէկ օրուան մէջ այս երկրորդ անգամ էր՝ որ իւր ապերախտութեան համար կը մեղապարէր Ծառամբը զնեց այն շիկահեր ռամիկը՝ որոյ վայելուչ դիմագծերն իրեն անձանօթ չէին, և իսկոյն ճանաչեց Պարիս սուսերամարտը : Սակայն անոր առած յանդիմանութեանց իմաստը չի հասկացաւ. օրովհետեւ ինքն չէր գիտեր թէ Պարիս կայսեր ազատագրելոյն հետ կուռեցաւ որպէս զի ինք Տիրբեր գետոյն մէջ չի ձուլի : Սուսերամարտն Անիկեստոսի աղաչած էր՝ որ պատրիկին չի յայտնէ զինքն ազատողին անունը, և քրիստոնէայ քահանայի գաղտնիքը պահած էր : Արդ Սեբաստոս կ'ուզէր այս միջին խօսքերուն բացատրութիւնն իմանալ. բայց Պարիս կոնտըր դարձուցած՝ ճամբան առաջ կը տանէր :

— Իրաւունք ունիմ՝ թշուառ գերւոյ մը ըսածին համար նեղանալու, մահաց կտտաղութեամբ :

Եւ ճամբան առաջ տանելով՝ հասաւ Լատինեան դրան առջև, և հոն կեցաւ՝ որ իւր աչաց հանդիպած հետաքրքրական տեսարանը հանգրտութեամբ դիտէ :

Դռնէն քիչ մը հեռու՝ պղնձե եռոտանոյ մը վրայ զետեղուած և փայտեղու սարսափեղի կրակի մը վրայ դրուած էր կաթսայի ձեռով մեծ անօթ մը, որոյ մէջ իւր կ'եռացրնէին : Անմիջապէս քովը փոքրիկ սանդուղ մի կը հանէր ցիցերու վրայ հաստատուած բարձրաւաղակ մը, ոսկից կը տեսնուէր անօթին յատարը : Երեք կիսամերկ անձինք կրակ կ'արծարծէին, որպէս զի իւրը շուտ եւ ուայ : Բաւական բազմաթիւ խմբեր այս հանդերձանքը կը դիտէին. իսկ բարձրաւանդաւորն իր քով կառուցած բեմին վրայ, որ ծերակոտի անդամը և քրմաց յատկացեալ էր, ուրախութեամբ խօսելով՝ տեսարանին կը սպասէին :

Սեբաստոս իւր կառէն իջաւ. և կնոջ մը մօտենալով, հարցոյ՝ թէ արդեօք կաթսայն ի՞նչ բանի համար էր :

— Նազովրեցի մը խաշելու, ըսաւ կինը, պատրիկ մը հետաքրքրութիւնը յազեցնելուն համար ինք զինքն երկնիկ համարելով :

Սեբաստոս սարսափէն. դողաց, և ուզեց

կառք նստելով՝ այս շարագուշակ տեղէն հե-
ռանալ. բայց ամբոխին աղմուկը՝ որ զոհին
զալը կը յայտնէր, զինքն արգիլեց, եւ նա
մնաց այն տարօրինակ հրապուրանք՝ զոր ա-
մէն ահարկու եւ անսովոր տեսարաններ կ'ազ-
դեն մարդկային մտաց վրայ:

Պատահուտուն զգեստներով յարգելի ծերու-
նի մը Մամբրտեան բանտէն ելնելով, պրե-
տորական պահանդողաց գնդով մի շրջապա-
տուած, դանդաղաքայլ առաջ կու գար: Քրիս-
տոսի ամենասիրելի աշակերտն՝ Յովնանէն
էր նա, որ առաքեալներէն ինքն միայն կեն-
դանի մնացած էր: Քրիստոսի վաթններորդ
թուականէն ի վեր փոքր Ասիոյ Եփեսոս
քաղաքին եպիսկոպոս էր. եւ բռնուելով փա-
կուած էր Մամբրտեան բանտին մէջ՝ յորում
Պետրոս եւ Պաւղոս եւ կալանաւորներ էին.
հուսկ ապա գնա մարդկային շարութեան հնա-
րած ամենատակալի մահուան դատապար-
տեցին:

Ամէն կողմ խորին լուսթիւն մը տիրեց,
այնպէս որ ճանճի մը թռիչն իսկ կը լուսէր:
Յուգեալ ամբոխն յետ քաշուեցաւ՝ որպէս
զի ճամբայ բանայ սրբոյն, որ տօնախմբու-
թեան գնացողի մը նման խաղաղ եւ ուրախ
կը յառաջանար:

Մահապարտութեան տեղը հասնելով, դո-
հինները վայրագութեամբ զինքը բռնեցին,
բարձրաւանդակին վրայ հանեցին, խլեցին ըզ-
գեստները, եւ իրենց բազկաց վրայ վեր բար-
ձրացնելով՝ կաթսային մէջ գլորեցին:

Ընկնող մարմնոյ մը շառախնը լսուեցաւ,
եւ թանձր ծուխ մը գահճաց երեսներն այ-
րելով, դէպ ի երկինք բարձրացաւ:

Ամենուն աչքը կաթսային վրայ դարձած
էր, յուսալով վկային վերջին եւ ցաւային ջը-
ղածգոտութիւնը տեսնել: Չարմանալի հրաշք.
Պատմութիւն ապագայ մարգարէն ձեռքերը միա-
ցուցած, մինչև իւր կուրծքը ծածկող իւղէն
վեր բռնած էր. լուսոյ պսակ մի իւր պատ-
կառելի գլուխը կը շրջապատէր, եւ ինքն իբր
հանդիսի մէջ՝ Ամենակալին շնորհակալութեան
երգ մի կը նուագէր:

Հանգիստտեք այլայլմամբ զինքը կը դի-
տէին, եւ դահիճներն ահաբեկած էին. մերջա-
պէս ամբոխին միջէն շշմջիւն մը բարձրացաւ.

— Իւղը պաղ է:

— Իւղը շեռար, ըսաւ Սքեստոս,

Եւ բազմութիւնը ճեղքելով՝ կաթսային
մօտեցաւ, եւ մասն հեզանիւթոյն մէջ դրաւ:
Յանկարծ ցաւազին աղաղակ մը հանեց եւ
արագութեամբ յետ քաշուեցաւ՝ այրած մատը
շարժելով:

— Կախարդանք կայ հոս, աղաղակեց Ժո-
ղովուրդը՝ տեսնելով այս փորձը:

Սակայն շատերն հրաշքին հաւատալով,
յանկեղծ արտէ գողեցին հաւատքով.

— Նազովրեցոց Արամազդն է ճշմարիտ
Արամազդն:

Սքեստոս ապշած էր: Փլորոնիայի գոշա-
կած հրաշքը կատարուեցաւ. սակայն նո զեռ
փաստին դէմ՝ կը կուտէր, նման յոգնած
պատերազմողին՝ որ չի յաղթուելու համար
վերջին ճիգ մը կը թափէ:

Երբ յետ դարձաւ որ երթայ կառքը գտնէ,
զարնուեցաւ ծնրադրած մարդու մը, որ Պա-
րիս սուսերամարտն էր: Հրաշքը՝ խաւարա-
րնակ ռամկին միաքը լուսաւորած էր, որ
զեսնատարած՝ քրիստոնէից Աստուծոյն ա-
մենասարդողութիւնը կը դաւանէր:

— Պիտի մոլորի այս մարդը, շշմջեց
Սքեստոս:

Եւ փլորոնիայի ազատարարին ազգած՝ գու-
թէն յաղթահարեալ, անոր բազկէն բռնեց
եւ ըսաւ.

— Ոտքի ել եւ ինձ հետեւ:

Պարիս գործիաբար հնազանդեցաւ. եւ իւր
տեսածովն այնքան վերացած էր՝ որ ինչ բ-
նելը չէր գիտեր: Առանց այլոց ուշադրու-
թիւնը գրաւելու՝ բազմութեան միջէն անց-
նելով՝ կառքին մօտ եկան: Սքեստոս նստաւ,
եւ նշան ըրաւ Պարիսի որ զայ իւր ոտից
քով նստի. յետոյ գերւոյն հրամայեց որ իւր
ետեւէն զայ. իսկ Լուկիոս Եփեսոսիլիոսի այ-
ցելելու խորհուրդը թողուց: Սարքինոսի պար-
տէզները հասնելով՝ վար իջաւ եւ տունը մը-
տաւ. Պարիս այլ իրեն հետեւեցաւ. եւ իւր
հիացմանէն սթափելով,

— Ինչո՞ւ զիս հոս բերիր, ըսաւ:

— Մտիկ ըրէ՛, մինչև ցարդ ես նազով-
րեցիքը կը ծաղրէի, թէպէտեւ առանց ա-
տելու, բայց այժմ կը յարգեմ՝ զիրենք: Պա-

քրիստոնեայ փշորոնիան ազատեցիր, և ես կ'ուզեմ զքեզ ըմբշտակտէն գնել :

— Դժ փրկանքս ահագին պիտի ըլլայ, ըսաւ սուսերամարտն, առանց շատ հպարտանալու իւր արժանեաց վրայ :

— Փոյլ չէ. ես բաւական հարուստ եմ, և գու իմ ազատագրեալս պիտի ըլլաս :

— Դժ երբախազիտութիւնս անաւանս պիտի ըլլայ. բայց այսպէս թէ այնպէս, դու այլ ևս ամփիթատրոնին մէջ զիս իբր մարտիրոս պիտի տեսնես : Ես այժմ կ'ուզեմ ըմբշտակտին քով դառնալ, և վաղը Անի-կետոսի երթալով՝ զիս իւր նորահաւատից կտրգին մէջ գրել պիտի տամ : Բայց իրարմէ բաժնուելէ առաջ մտիկ ըրէ ինչ :

Պարիսի ձայնը գողաց և երեսին գոյնը նետեց, երբ կ'ըսէր հետեւալ խօսքերը .

— Երբեքմ Կոտնեյիա վեստեանն ազգականդ է. ըսէ իրեն որ իւր զեմ որոգայթ մը կը լարեն : Սակայն ինչ ըլլալը ես այլ չեմ գիտեր. միայն նուիրական շրջափակին շուրջը պտըտելու ժամանակ՝ ապուռ զազանի կերպարանօք վեստեան մը տեսայ, որ Պարս թենոսի հետ կը խօսէր. և ես լսեցի որ շատ անգամ Կոտնեյիայի անունը կու տային... Առ այժմ բարեաւ ծնա, պատրիկ, կը մեկնիմ ես :

Մինչդեռ Սեքստոս այդ օրուան մէջ հանդիպած նորօրինակ դիպուածները կը մտածէր, սուսերամարտը Սաբինոսի պարտէզներէն հեռանալով՝ հրապարակը գնաց. հոն կանգ առաւ՝ զեռ ևս հնուէն անսնելու համար սուրբ անտարանիչը, որ հրաշալի տանջանաց ներկայ եղող պրետորին հրամանաւ վերստին Մաւերտեան բանար կը տարուէր :

Գ Լ Ո Ւ Թ Ժ Ա

Վ Կ Ա Յ Ք

Դոմիտիա անհոգութեամբ պառկած էր գահաւարակի մը վրայ, հագած ասուեսայ նըրբահիւս պարեգօտ մի, և զիսակներն խառն ի խուռն և չքնաղ կերպով փութած էին ուռոց

վրայ : Նա թողած էր զանոնք իւր աղախնաց ձեռքը, որք իւր զարդարանաց հանդերձանքը պտտափոխելու զրազած էին :

Անոնց մին ծիրանի պարեգօտը և կըրկնօցը կը պտտափոխէր. ուրիշ մը կօշիկները. երրորդ մը թանկագին քառամանեկօց լի արկղիկ մը. չորրորդ մի պողպատեայ բոլորաձէն հայելի մը իւր պտտմունքներն ծայրովը կը փայլեցնէր. իսկ այլ շատեր իրենց տիկնոջ առաջին նշանը կատարելու համար պատրաստ կեցած էին :

Դոմիտիա իւր շուրջը կատարուածներուն ամենեւին ուշ չէր գնէր. կը թուէր թէ ընկըզմած էր խոր մտածութեան մի մէջ, որ անտարակոյս անործելի էր. որովհետեւ յանկարծ զգալի շարժեց և զոհութեամբ սկսաւ ծիծաղել : Թեոյո նշան մ'ըրաւ, և աղախինն յառաջանալով՝ մտղերուն վրայ ընաիր օծանելի մը քսեց և փափուկ ձեռքով զանոնք կարգի դրաւ. իսկ Դոմիտիա ձեռացը մէջ բռնած էր հայելին՝ որ իւր տաժանեալ գէմքը կը պտտեցնէր : Թանկարժակի ցնցուելով՝ աղախիկ մ'արձակեց. և զգեստին վրայէն ոսկի գնդասեղ մ'առնելով, բարկութեամբ զարձաւ թշուառ աղախնոյն որ նորա մագերը քաշած էր, և անոր անճարտարութիւնը պատժելու համար սկսաւ ծակծկել զնա : Աղախինն այս տեսակ վարմանց վարժած ըլլալով, ոչ մի տրտունջ չի հանեց. սակայն զգացած ցաւէն մեծ կաթիլ մ'արտասուք ընկաւ իւր այտից վրայ :

— Փութիմ, որովհետեւ ըստ կարեւայն շուտ դուրս պիտի ելնեմ, ըսաւ կայսրուհին անհամբերութեամբ :

Խեղճ աղախնայն ձեռքերը կը դողդոլային. և շփոթութենէն կրկին իւր անգութ տիկնոջ մագերը քաշեց, և առաջինէն աւելի ցաւազին ասեղի հարուածներով պատուեցաւ :

Հուսկ ապա Դոմիտիայի մագերն յօրինուեցան հազարաւոր գանգուարներով, որոնց մէջ ցօղի նման կը փայլէին խեղճ աղախնոյն արտասուքը : Ան ժամանակ կայսրուհին հագաւ եղրածիրանի պարեգօտը, և թանկագին քաւերով բազդակները և պարանոցը զարդարեց. յետոյ աղախնաց հրամայեց որ դուրս ելնէ և իւր Ստեփանոս հօգաբարձուն կանչեն :

— Հրամաններս կատարեցիր, ըսաւ՝ երբ ներկայացաւ նա :

— Լիովին. ես գիտիտիլլա լրտեսեցի, և այժմ կրնամ զբեղ ապահովցնել՝ որ փաււոս կոչուէս և իւր կինը նազովոցեցի են :

— Ես այլ այդպէս կը կարծէի. կուռնեւ լիայի վրայ նոր լուր ունիս :

— Շատ քիչ անգամ տաճարէն կը հեռանայ, և անպագար իւր Սէքստոս Սարի-նոս ազգականին այցելութիւնը կ'ընդունի :

— Լա. դիտէ թէ երբ պատրիկը Նու մայի պալատը կ'երթայ՝ և ինձ իմացուր, ըսաւ Դոմիտիա՝ վայրկեան մը մտածելէ յետոյ :

Յետոյ նշան ըրաւ Ստեփանոսի որ հեռանայ, և մինակ մնաց՝ լաւ մտածելու համար այն չարաշուք գաղափարին վրայ՝ զոր իւր չարութեամբը մտածեր էր Դոմիտիլլայէ վրէժ խնդրելու համար : Քանի մը վայրկեան յետոյ Դոմիտիանոսի սենեակը մտաւ :

Կայսրը ճանճի որսորդութիւն կ'ընէր. և այն վայրկեանին՝ յորում ափին մէջ անոնցմէ մին բանտած էր, Դոմիտիա վրայ հասաւ : Կայսրը ձեւացուց թէ զնա չի տեսներ, թուուց զոճը, կրկին բռնեց, և թեւերը խլելով՝ սեղանի մը վրայ դրաւ, որպէս չի քաշելը տեսնելով՝ զուարճանայ :

Դոմիտիա շրթունքը խածաւ, և սեղանին մերձենալով կնոջ մը իշխանական ապահովութեամբ՝ որ կը կարծէ թէ միշտ պիտի տիրէ, ճանճը գետին նետեց, և անոր վրայ կոխելով՝ հպարտութեամբ ըսաւ.

— Մտիկ ըրէ ինձ, և ժամանակդ մանկական զբօսանօք մի կորնցներ. որովհետեւ եկած եմ իմացնել քեզ այնպիսի բաներ որ ընտանեացդ պատուոյն կը վերաբերին :

Դոմիտիանոս կայսրուհոյն խօսից շատ կարեւորութիւն չի տուաւ. բայց անոր համարձակութեանը վրայ զայրացած, ծուռ աչքով անոր նայեցաւ՝ յետոյ տարածուեցաւ իւր սեղանին զահաւորակին վրայ և բոտ իւր սովորութեան սկսաւ յորանջել :

— Ինձ մտիկ պիտի ընեն, ըսաւ Դոմիտիա՝ որ չէր կրնար իւր բարկութիւնը զրգալ, տեսնելով որ իւր վրայ ուշադրութիւն չի դարձներ :

— Խօսէ՛, բայց համառօտ. որովհետեւ ժամանակս թանկագին է :

— Մի վախեր, ինձ ըրած շնորհիւդ պիտի չզեղծանիմ, ըսաւ կայսրուհին ծագածով թեամբ : Դու նազովոցեցիր կ'ատես և քու հրամանաւդ կը հալածուին. բայց դու չես գիտեր՝ որ եօթնադուսիս վիշապին նման միշտ կը երգմանան, և քու ընտանիքէդ անգամ կողմնակից կ'ունենան :

— Յանձն Պղուտոնի. եթէ կ'ուզես որ չի բարկանամ, այդ անիծեալ ցեղին վրայ ինձ մի խօսիր, ըսաւ կայսրը : Չէ՞ս գիտեր որ իմ կամքն անգոր է անոնց դէմ, և թէ իրենց կտնարգութեամբ ամէն տանջանաց կ'ըրգմանան : Դեռ երէկ եռացեալ իւղոյ կաթօսայի մը մէջ նետել տուի ծեր մի որ իրենց կրօնից եռանդուն քարոյղին էր : Կը հաւատաս արգեօք որ չի մեռաւ : Եթէ պրետորն և ծերակոյտին անդամներն որ տաճանաց ներկայ եղան, զիս չապահովցնէին, ես պիտի չհաւատայի... Այժմ ալ չեմ համարձակիր զինքը մահուան դատապարտելու, բայց պիտի պատժեմ : Եղբան ծովուն մէջ Պատմոս անուամբ կղզի մը կայ, հոն պիտի աքորեմ, և մարդկային ամէն ընկերութենէ հեռի՝ միայնութեան և թշուառութեան մէջ պիտի մեռնի... Կը տեսնես որ իրաւունք ունիմ քարկանայու՝ երբ անոնց անունը կը լսեմ. ուրեմն լռէ՛ և իմ զբաղմանց կարճատե փայրկեանները մի տխրեցնէր :

— Լաւ. եթէ քեզ հաճոյ է, զանոնք քու ընտանեացդ մէջ պահէ, և պաշտպանէ զփաււոս և Դոմիտիլլա որ Նազովոցի են, ըսաւ Դոմիտիա սառնութեամբ :

— Ոչ, յանձն Պղուտոնի, ըսաւ կայսրն կատարութեամբ. ապահով ես :

— Երկուքն այլ նազովոցի են. և եթէ կ'ուզես համոզուիլ, հարցաքննէ զիրենք, եւ պիտի տեսնես՝ որ չեն ուրանար :

— Այո՛, իրաւ է, որովհետեւ այս մարդիկ ոչ միայն հաւատքնին չեն ծածկեր, հապաւնաւթաւոր կը խոստովանին : Փլաւիոս իւր հիւպատոսութեան տարին երէկ լրացուց, և Հռովմայեցիք զեռ մինչև ցարդ չեն տեսած պրետորն մը՝ որ կրկնէին մէջ մեռնի : Ես այս տեսարանը անոնց պիտի ցուցնեմ,

և իմ իշխանութեանս տարեգիրքը այդ բանին վրայ պիտի խօսին, ըսաւ Դոմիտիանոս՝ ինքն իրմէ գոհ ոտքի ելնելով։

Նոյն վայրկենին տեսաւ որ ճանճ մը Դոմիտիայի մազերուն վրայ նստաւ. եւ որովհետեւ իւր անարդ վարժութիւնն զբաղելու ամենաժառանգ խնդիրներն իսկ կը մոռցնէր, ձեռքը երկնցուց զայն բռնելու համար, և քաշեց կայսրուհոյն մազերը, ուսկից գնդաւ սեղ մի ձեւքը մկաց։ Էյ խեղճ կենդանւոյն թեկերը հանելու համար հեռացաւ՝ ըսելով։

— Էյ՝ ուզեմ չարչարել զքեզ, ինչպէս որ քիչ ժամանակէն նազովքեցիքը պիտի տանջեմ։

Եւտոյ դուրս ելաւ հրամայելու համար՝ որ փլաւիտ Եղեմէս և Դոմիտիլլա իւր առջեւը բերեն։

Ժամ մը յետոյ պատրիկն և իւր կինն ահաբեկած՝ բռնաւորին ներկայացան։

— Փեղի քանի մը խօսք ունիմ՝ բռնու, ուստի կ'սլզի զքեզ տեսնել, բաւ կայսրը փլաւիտին կեղծ քաղցրութեամբ մի։ Ըսէ՝ ինձ, բարեկամ, թէ արդեօք այդքներեաց և աստուածոց հաւատարմիմ ես։

Դոմիտիլլա զգալով իւր ամուսնոյն սպառնացեալ վտանգը, վախէն զոյնը նետեց. իսկ փլաւիտ անխուլ մնաց։

— Հազար անգամ կեանքս հայրենեաց համար կու տամ, ըսաւ հանգարտութեամբ, և մինչե ցարդ քաղաքացւոյ պարտուցս մէջ պակսած չեմ։

— Արդեօք աստուածոց այլ հաւատարմւ պէս հաւատարմիմ ես։

Փլաւիտ չի պատասխանեց, և տիրազին Դոմիտիլլայի նայեցաւ. մահէ կը վախէր իւր ամուսնոյն համար. սակայն իւր վարանմունքը մի վայրկենէ աւելի չի տեսց։ Այնքն զէպ ի յերկինս վերցնելով, այն սիրեցեալ հոգւոյն համար Հոգւոյն սրբոյ օգնութիւնը խնդրեց։

— Իմ աստուածքս ըսաւ, ե՛ն այն ամենաւկարող Աստուածն որ ստեղծեց երկինքն և երկիրը, և Յիսուս Քրիստոսն անոր աստուածային որդին, որ մօրը եղաւ և մեռաւ՝ զմեզ վերստին գնելու համար։

— Ըսածդ չեմ հասկանար. գրուցէ, ի՞նչ է քու կրօնքդ, կրկնեց կեղծաւորութեամբ

Դոմիտիանոս, որ կ' ուզէր իմանալ պատրկէն այնպիսի խոստովանութիւն մի՝ որով զինքը պիտի զատապարտէր։

— Մի՛ վախեր որ կեղծեմ, ո՛վ կայսր. զիտես որ քրիստոնեայ եմ. ուրեմն առանց վարանելու հրամայէ՛ որ արեան մկրտութեամբ մաքրուիմ, և պիտի մեռնիմ՝ ներելով քեզ։

Այս խօսքերս փլաւիտ արտասանեց վսեմ ծանրութեամբ մը։ Նա խանդավառութեան ազդեցութեամբ չէր գործեր. աստուածային հաւատքը և խղճին վկայութիւնը՝ ի՞նչ պարտքը կատարեց, գնա խաղաղ և զուարթ կը բռնէին։

Խղճալի աղաղակ մը լսուեցաւ Դոմիտիլլայի բերնէն։ Երթծելով թէ՛ արդէն իսկ զփլաւիտ կատաղի գազանաց ակալայից մէջ կը տեսնէ, ձեռքէն բռնեց՝ իւր մարմնով իրեւանոր վահան մ'ըլլալու համար. և իւր արտասուալից աչքն զէպ ի Դոմիտիա բարձրացուց՝ նորա գթութիւնն հայցելու։ Եկայսրուհին մազերուն զանգուրներն յարկաբելու զբաղած ըլլալով, չտեսաւ նորա աղաչաւոր կերպարանքը։ Այն ժամանակ խեղճ կինը Դոմիտիանոսի դարձաւ. սակայն եւ նա ճանճի մը թռչելը կը դիտէր։

— Հանգարտե՛, սիրելիդ իմ. եթէ Աստուած իւր բարութեամբ զմեզ մարտիրոսութեան սահմանած է, օրհնե՛նք զնա միասին, ծիծաղելով ըսաւ փլաւիտ Դոմիտիլլային, որ բռնած իւր ձեռքն, արտասուօք թրջեց։

— Դո՛ւ այլ, Դոմիտիլլա, դո՛ւ այլ թու աստուածներդ մերժած ես, ըսաւ յանկարծ Դոմիտիանոս։

Դոմիտիլլա լուռ կեցաւ։

— Պատասխանէ՛, կրկին աղաղակեց անհամբերութեամբ։

— Փլաւիտի հաւատքը իմն այլ է. ես կը հաւատամ անոր՝ որուն կը հաւատայ ինքն. և եթէ կ' ուզես վեհանձնութիւն մ'ընել, զիս իրեն հետ մեղցուր, պատասխանեց օտկինը։ Անգթութիւն և բռնութիւն կարող են բաժնել զմեզ հոս. սակայն արդե՛ք չկան երկնից մէջ՝ յորում յաւիտեան պիտի միւսնանք։

Դոմիտիանոսն անզոյթ ծիծաղով՝ մը լսեց այս խօսքերն. վշտազ նայուածք մ'առաւ, գոբոս ելաւ եւ իսկայն կրկին յետ դարձաւ։

— Այլ ևս քու վիճակդ որոշեցի, ըստ փլախոսի. ուրաքիր հաւատքդ և աստուածոց քաւութեան զոհ մ'ըլլէ՝ որ ազատիս :

— Նա որ բեր անգամ պատերազմի վաշտին վրայ մահուն գէմ ելաւ և հռովմէական արծիւներն 'ի յաղթանակ վարեց, իւր Աստուծոյն համար մեռնելէ պիտի չլսաի, պատասխանեց փլախոս :

— Եւ դու, Դոմիտիլլա :

— Ամուսնոյս հետ պիտի մեռնիմ, քրիստոնէից Աստուածը զովելով :

— Լա Եւրեմի. քանի որ մահն քեզի համար քաղցր է, դու պիտի չմեռնիս. բայց ես գիտեմ՝ պատժել զքեզ, ըստ Դոմիտիլլայի :

Յետոյ իրենց զուռը ցուցնելով,

— Հեազէք, ըստ, և ձեր տոնիկ ներկայութեամբ պաշտոս մի՛ պղծէք : Ձիս կը սարսափեցնէք, որովհետեւ կը վախեմ՝ որ եթէ գեռ երկայն ժամանակ հոս կենաք, Արամազդայ կայծականց հանդիպիմ :

Երկու քրիստոնեայ ամուսինք միասին զուրս ելան, և գաւթին դրան սեմոց վրայ դրան հարիւրապետ մը, որ ծանոյց փլախոս կղեմեսի բերած հրամանն՝ հետեւելու գէպ ի Մամերտեան բանտն : Այս բաժանումն Դոմիտիլլայի սրտին տաւի ջաւազին եղաւ քան թէ մահն. իւր եռանդուն հաւատովք և գերազանց առաքելութեամբ զօրացած, նետուեցաւ աստուածային նախախնամութեան քաղկաց մէջ. և գեռ ունենալով քիչ մի ոյժ, սեղմեց ամուսնոյն ձեռքը եւ ըսաւ.

— Վերստին տեսնենք զիրեար յերկինս :

— Այո՛, յերկինս, կրկնեց փլախոս, ուր յաւիտեան Աստուծոյ հետ միացեալ պիտի ըլլամք : Բայց դու սրբէ՛ արտասուքդ և ուրախացիր, որովհետեւ հոգիս գառին արեամբ լուացեալ, գէպ ի մշտատեւ երջանկութեան օթելվաճը պիտի սլանայ, ուր մեր որդոց և քեզ համար պիտի աղօթեմ :

Յետ այս խօսքերն արտասանելու՝ փլախոս հարիւրապետին հետեւեցաւ, և տառապետաւ Դոմիտիլլա Անիկետոսի գնաց, յուսալով քրիստոնեայ քահանային խօսքերով միխիթարուիլ : Նա ցաւօք լսեց պատրիկն բան-

տարկութեան պատմութիւնը, և Դոմիտիլլանոսի առ հիւպատոսի կինն ըրած վեհանձնութեանը վրայ զարմացաւ : Եռանդուն գլթով ջանաց թշուառ վշտագնելոյն ցաւերը մեղմել, խօսելով երկնից արքայութեան վրայ՝ ուր ալ չկայ ոչ արտասուք, ոչ վիշտ. և նա որ չարչարանք քաշած է, անդ խաղաղութեան մէջ կը հանգստանայ : Այս խօսքերն կենդանացուցիլ բաշտանի նման հիւպատոսին կնոջ սրտին մէջ թափանցեցին եւ իրեն անբացատրելի և երկնային համբերութիւն մի շնորհեցին :

Փլորոնիա իւր քաղցր ձայնը միացոյց ծեր քահանային ձայնին հետ. յօժարակամ իւր կեանքն կու տար՝ եթէ կարենար ազատել պատրիկին :

— Մենք այլ փլախոսին պիտի վիճակեցինք, կ'ըսէր՝ Դոմիտիլլա զրկելով. ուրեմն օրհնենք Բարձրեալը, եւ ի մահ գեմենք շնորհակալութեան երգով մի :

Դոմիտիլլա երկար լացաւ՝ կռթնած մատաղ օրիորդին ուսին վրայ, որ նորա արտասուքը կը սրբէր. յետոյ առն զարձաւ : Ի սկզբան իւր տալով և դաւակաց չի յայտնեց հիւպատոսին մօտալուտ մարտիրոսութիւնը. բայց ապա անոնց հետ միասին լալ ուզելով, գնաց այն սենեակը, յորում տալն իւր որդոց իադրուէ՝ կը հսկէր, և տխուր արկածն յայտնեց անոնց :

Մատաղ օրիորդին գէմն, զոր եկեղեցին ժամանակ անցնելով իւր սրբուհի պիտի պատուէր, արտասուքով ծածկուեցաւ. յետոյ ծնրալոցն՝ զոչելով.

— Օրհնեալ ըլլայ աստուածային կամքն՝ որ եղբայրս մարտիրոսութեան կ'արժանացնէ : Երբ ոտքի ելաւ, իւր երեսն երկնային պարգոյթեամբ կը փայլէր՝ և հեշտակաց ծիծաղն իւր շրթանց վրայ կը տեսնուէր :

Սակայն նոյնը չեղաւ տղայոց համար. այս տան այնքան խաղաղ արձաքանդներն անոնց հեծեծանքին հնչեցին : Այս ցաւն զգացին նոյն պէս և ծառայքն՝ որը լացին իրենց մարդասէր և բարերար տէրը :

Երկու կամ երեք օր վերջ կայսեր եղբոր օրդին Դոմիտիլլա իմացաւ միանգամայն հիւպատոսին փառաւոր մահն, իւր աքսորն 'ի

Պանդատարիա կղզին, իւր տալոջն ի Պոն-
տիա կղզին, եւ իւր բաժանումն զաւակնե-
րէն, որոց խնամակալ կ'անուանէր Դոմի-
տիանոս ինք զինքն:

— Ո՛վ Յիսուս, ամէնողորմ փրկիչ, ա-
ղաղակեց՝ երբ մեկնելու ժամանակ իմացաւ
այս կսկծեցուցիչ լուրը. քու բարութիւնդ
մարդոց չարիքէն մեծ է: Անկարելի է, ո՛վ
Տէր, որ զու մերժես վկայի մը եւ մօր
մ' ազաւանքը, եւ թէ որ մը չի պարձնես ինձ
որգիքս՝ զորս քեզ կը յանձնեմ:

Իւր տալոջ հետ վերջին ականարկ մը ձգեց
այն տան վրայ, ուր այնքան երջանիկ ներս
մտած էր եւ ուսկից առանց որդուցը զուրս
կ'ելէր: Յետոյ լուսթեամբ իւր ծառայից
ձեռքը սեղմեց եւ զինքը տանող կառքին
մօտեցաւ: Նշոյն վայրկեանին մարդ մը պատա-
տուած կրկնացի մը մէջ, որ կը ծածկէր իւր
դէմքը, մերձեցաւ, եւ կտաւակ մը նորա ձե-
ռաց մէջ դնելով՝ ըսաւ.

— Իւր վախճանն փառաւոր եղաւ: Նա
մեռաւ՝ գիարձերեալն օրհնելով:

Դոմիտիլա դիտեց վկային արեւոն մէջ

թաթախուած թանկագին նշխարը. յետոյ
խանդաղատանաց եւ յարգանաց ձեռով մի իւր
սրտին վրայ սեղմեց զայն: Եւ աչքերը վերցը-
նելով զայն բերողին վրայ,

— Օրհնեալ ըլլաս, վեհանձն մարդ, ը-
սաւ, ճանաչելով զսուսերամարտի Պարիս:


Յետոյ վրայ բերաւ, իբր թէ ինքն իրեն
խօսէր.

— Իւր մարմինն ձգուած է տանջանա-
րանաց մէջ. եւ այս գիշեր՝ երբ ես մեկնիմ
Հոլովէն, Տիբերի մէջ պիտի նետուի:

— Այս գիշեր Փլաւիոս հրապատոսն կամ
քրիստոնէական գերեզման մը պիտի ունենայ
եւ կամ Պարիս պիտի մեռնի, պատասխանեց
սուսերամարտն:

Վշտահար կանայք կառք նստան. եւ վեր-
ջին անգամ մ' այլ ողբունելով այն տունն,
յորում մին ծնած էր եւ միւսն կը թողուր
իւր տղայքը, միմեանց ձեռք բռնեցին, եւ
յօժարակամ ձայնով սաղմոսին այս խօսքն
ըսին. « Ի քեզ, Տէր, յուսացայ, մի՛ ա-
մաչեցից յախտեան: Եւ կառքն զանգա-
ղօրէն մեկնեցաւ յաքսորանս:

Շարայարեղի



Մ Ե Ղ Ո Ւ Ա Ր Ո Ւ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Տես Ոտ. ծգ. էջ 459)

Բաժանումն աշխատութեանց. — Գւր-
ծասէր մեղուններն կը բաժնեն իրենց մէջ
աշխատութիւնները, ըստ յարմարութեան
ընկերաց եւ հանգամանաց ժամանակին. ա-
նոնք որ կարող չեն մօմ կազմել, կ'երթան
ծաղկաքաղ ընելու: Բայց երբ առատ մեղր
հաւաքելու ժամանակն գայ, ամէն գործասէր
մեղուք կ'երթան մեղր հաւաքելու: Սովորա-
կան աւարառուք եւ ծեր մեղուններն չեն պա-
րապիր ի խնամա թրթրոց, եւ քիչ անգամ ի
պահպանութիւն եւ ի մաքրութիւն փեթակի:
Մաքրութիւն փեթակի. — Ներքին աշ-
խատար մեղուններն կը պարապին ի մաք-
րութիւն փեթակի, վերջնելու եւ տանելու ա-
մէն աղտեղութիւնները եւ դիակները. եւ ա-
կանամոռով պատելու այն թշնամեաց գիակ-

ները՝ զոր չեն կարող դուրս հանել, եւ որք
մնալով կրնային հոտել եւ փեթակին օդը ա-
պականել:

Փեթակին ներքին աղտեղութիւնները մա-
քրելու կամ աւելու համար կը գործածեն
իրենց թեւերը, զորս կը շարժեն բոլորովին
տարբեր կերպով՝ քան երբ հարկ ըլլայ օդը
փոխելու կամ քզիան հանելու համար:

Հովառարութիւն փեթակի. — Մեղու-
ներն հարկաւորութիւն ունին իրենց բը-
նականին օդը փոխելու եւ զովացնելու,
սաստիկ տաքութեան ժամանակ: Եւ կը տես-
նելք յայնժամ, որ մանաւանդ ի մուտս դրան
փեթակին եւ անոր առջեւ տախտակին վրայ
իրենց ոտքերուն ճանկերով կպած, անդա-
դար կը շարժեն իրենց թեւերը երազ երազ: